ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----------ի 2026 թվականի №---Ա

«ԷՆԵՐՋԻ ՊՐՈՎԱՅԴԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №517-Ն որոշմամբ հաստատված՝ մինչև 2026 թվականի օգոստոսի 1-ը գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ) 37-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մատակարարն օրենքի, լիցենզիայի, ԷՄԱ կանոնների համաձայն՝ պետք է ունենա սպասարկման գրասենյակ, պաշտոնական կայք, որոնց միջոցով սպառողին տրամադրում է տեղեկություն և պարզաբանում՝ մատակարարման պայմանագրի կնքման ընթացակարգի և անհրաժեշտ փաստաթղթերի, մատակարարվող էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի, վճարման ժամկետների և դրանց խախտման հետևանքների, սպառողների կողմից բողոքների և դիմումների ներկայացման և մատակարարի կողմից դրանց պատասխանելու կարգի և իր կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված այլ հարցերի վերաբերյալ,

2) ԷՄԱ կանոնների 57-րդ կետի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը պարունակում է առնվազն՝ մատակարարվող էլեկտրական էներգիայի գինը կամ վճարը, վճարումների կարգը և խախտման հետևանքները, պայմանագրի գործողության ժամկետը, պայմանագրի լուծման կարգը և հետևանքները, այդ թվում՝ երաշխավորված մատակարարի

կողմից սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու դեպքում ԷՄԱ կանոնների 82-րդ կետով սահմանված իրավակարգավորումը,

3) ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը լուծվում է սպառողի նախաձեռնությամբ՝ լուծումից առնվազն 6 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով մատակարարին, իսկ մատակարարման խմբի մասնակից լինելու դեպքում՝ լուծումից առնվազն 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով մատակարարին և մատակարարման խմբի մյուս մասնակիցներին, և մատակարարի նախաձեռնությամբ՝ մատակարարման պայմանագրով կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ այդ մասին առնվազն 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով սպառողին,

4) Հանձնաժողովը 2026 թվականի մարտի 16-ից մինչև 2026 թվականի ապրիլի 3-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է ԷՄԱ կանոններով մատակարարներին ներկայացված պահանջներին մատակարարների համապատասխանության ուսումնասիրություն, որի շրջանակում Հանձնաժողովի 2026 թվականի մարտի 16-ի №ՄՄ/34.3-Ղ4-4/1448-2026 գրությամբ «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվութամբ ընկերությունից (այսուհետ՝ Ընկերություն) պահանջվել է 5-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Ընկերության սպասարկման գրասենյակի հասցեի վերաբերյալ տեղեկատվություն և գրասենյակի լուսանկարները, որոնք հնարավորություն կտան ամբողջական պատկերացում կազմել գրասենյակի և գրասենյակում առկա տեղեկատվության վերաբերյալ, Ընկերության պաշտոնական կայքի հասցեն, ինչպես նաև սպառողների հետ կնքվող մատակարարման պայմանագրի ձևը, իսկ մեկից ավելի պայմանագրերի տեսակ կիրառելու դեպքում՝ ձևերը,

5) Ընկերությունը 2026 թվականի մարտի 20-ի №ԷՊ-001 գրությամբ ներկայացնելով պահանջվող տեղեկատվությունը և գրասենյակի լուսանկարները, նշել է նաև, որ Ընկերության սպասարկման գրասենյակը գտնվում է Երևան քաղաքի Ղափանցյան №3 հասցեում, պաշտոնական կայքն է՝ https://energyprovider.am/hy, որտեղ արտացոլված են Ընկերության գործունեության հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, տեղեկատվություն Ընկերության աշխատանքային օրերի և ժամերի վերաբերյալ, Ընկերության կողմից մատուցվող ծառայությունները, մատակարարման պայմանագրի կնքման ընթացակարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դիմում կամ բողոք ներկայացնելու կարգը՝ համապատասխան հղմամբ: Ընկերությունը ներկայացրել է նաև սպառողներին էլեկտրական էներգիայի

մատակարարման պայմանագրի ձևը՝ նշելով, որ սպառողների հետ պայմանագրի կնքման գործընթացում պայմանագրի ձևի կետերը ենթակա են փոփոխման սպառողի պահանջներին համապատասխան: Պայմանագիրը ներառում է էլեկտրական էներգիայի գնի, մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի հաշվարկման և վճարման կարգի, սահմանված ժամկետում սպառողի կողմից վճարում չկատարելու դեպքում՝ հետևանքի, գործողության ժամկետի և դրա փոփոխմանն, ինչպես նաև լուծմանն առնչվող դրույթներ: Ընկերությունը նշել է նաև, որ ի թիվս պայմանագրի լուծման մյուս հիմքերի՝ սպառողն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին առնվազն երեք ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մատակարարին, մատակարարը ևս կարող է լուծել պայմանագիրը միակողմանի՝ այդ մասին սպառողին երեք ամիս առաջ տեղեկացնելու պայմանով:

6) Հանձնաժողովը 2026 թվականի ապրիլի 13-ի №ՄՄ/34.3-Ղ4-4/1976-2026 գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է, որ վերջինիս կողմից ներկայացված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի տիպային ձևում սպառողի և մատակարարի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման ժամկետները չեն համապատասխանում ԷՄԱ կանոններով սահմանված ժամկետներին: Բացի այդ, ԷՄԱ կանոնների 57-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը պարունակում է առնվազն պայմանագրի լուծման կարգը և հետևանքները, այդ թվում՝ երաշխավորված մատակարարի կողմից սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու դեպքում ԷՄԱ կանոնների 82-րդ կետով սահմանված իրավակարգավորումը: Մինչդեռ, Ընկերության կողմից ներկայացված մատակարարման պայմանագրի տիպային ձևում առկա չէ հիշյալ դրույթը: Հիշյալ գրությամբ Ընկերությունից պահանջվել է վերոնշյալի վերաբերյալ պարզաբանում ներկայացնել Հանձնաժողով:

7) Ընկերությունը 2026 թվականի ապրիլի 14-ի №ԷՊ-14/04 գրությամբ հայտնել է, որ ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում կիրառված «առնվազն» եզրույթը, իր լեզվաբանական և իրավական բովանդակությամբ, նշանակում է «ոչ պակաս, քան» և սահմանում է նվազագույն ժամկետ: Հետևաբար, նշված նորմերը չեն նախատեսում առավելագույն սահմանափակում և չեն բացառում պայմանագրով ավելի երկար ծանուցման ժամկետների սահմանումը: Այս համատեքստում Ընկերության կողմից ներկայացված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի տիպային ձևով նախատեսված

երեքամսյա ծանուցման ժամկետը Ընկերության գնահատմամբ չի հակասում ԷՄԱ կանոնների պահանջներին: Միաժամանակ, Ընկերությունը նշել է, որ արհեստական խոչընդոտներ չի ստեղծել մատակարարման պայմանագրերի լուծման գործընթացում:

ԷՄԱ կանոնների 82-րդ կետով սահմանված իրավակարգավորման վերաբերյալ պահանջի մասով Ընկերությունը նշել է, որ ընդհանրական բնույթով է ձևակերպել նշված կետը պայմանագրի տիպային ձևում,

8) 2026 թվականի մայիսի 7-ին Հանձնաժողովում հրավիրվել է աշխատանքային քննարկում մատակարար ընկերությունների մասնակցությամբ՝ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված փաստերի շուրջ վերջիններիս մոտ առկա տարընկալումների քննարկման նպատակով: Քննարկման արդյունքում Ընկերությունը հանձն է առել սեղմ ժամկետում սպառողների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերը վերակնքել՝ համապատասխանեցնելով ԷՄԱ կանոններին,

9) Ընկերությունը 2026 թվականի մայիսի 11-ի №ԷՊ-11/05 գրությամբ ներկայացրել է հիշյալ աշխատանքային քննարկման արդյունքներով իր կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես նշելով, որ.

- Ընկերության կայքում տեղադրված է պայմանագրի նոր օրինակելի ձևը՝ (https://energyprovider.am/storage/files/matakararman-paymanagir-orinakeli-dzev.pdf) հղմամբ:
- Ընկերության հաշվեկշռման խմբում ընդգրկված բոլոր սպառողներին ներկայացվել է պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրեր, որոնց համաձայն կատարվել են Հանձնաժողովի կողմից ներկայացված փոփոխության պահանջները:
- Հանձնաժողով է ներկայացրել Ընկերության և սպառողների միջև կնքված ու գործող մատակարարման պայմանագրի բոլոր առկա տարբերակների օրինակները՝ թվով 6 հատ:
- Հանձնաժողով է ներկայացրել Ընկերության հետ գործող մատակարարման պայմանագիր ունեցող սպառողներին ներկայացված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայանագրերը՝

✓ համաձայնագրի հաստատված տարբերակը ներկայացրած սպառողների դեպքում՝ եկկողմ հաստատված տարբերակները՝ թվով 14 հատ,

✓ համաձայնագրի հաստատված տարբերակը չներկայացրած սպառողների դեպքում՝ Ընկերության կողմից հաստատված տարբերակը, որն ուղարկվել է թվով 40 սպառողներին հաստատման:

- Հանձնաժողով է ներկայացրել պետական գնումների ընթացակարգերի համաձայն կնքված մատակարարման պայմանագրերի օրինակները՝ թվով 4 հատ, որոնցում Ընկերությունը փոփոխություններ չի կարող իրականացնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագիրը հաստատվում է մրցութային ընթացակարգի համաձայն:

Միաժամանակ, Ընկերությունը տեղեկացրել է, որ նախաձեռնել է գործընթաց, համաձայն որի՝ Ընկերության և սպառողների միջև կնքված և գործող բոլոր մատակարարման պայմանագրերը, նոր համաձայանագրերով կբերվեն մեկ միասնական տեսքի՝ համաձայն կայքում հրապարակված օրինակելի ձևի,

10) Ընկերությունը 2026 թվականի մայիսի 27-ի №ԷՊ-27/05 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել սպառողների հետ կնքված պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին ևս 9 համաձայնագիր, միաժամանակ նշելով, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները նշված գործընթացը հնարավորինս արագ իրականացնելու համար, սակայն վերջինս ազդեցություն չունի սպառողների կողմից համաձայնագրերի ստորագրման գործընթացի վրա, ուստի սպառողների կողմից համաձայնագրերի հաստատված տարբերակները ներկայացնելու պարագայում դրանց վերաբերյալ Ընկերությունը լրացուցիչ կտեղեկացնի Հանձնաժողովին: Ընկերությունը նշել է նաև, որ անկախ սպառողի կողմից համաձայնագրի ստորագրված լինելու հանգամանքից, սպառողի կողմից մատակարարման պայմանագրի լուծման գործընթաց սկսելու պարագայում Ընկերությունը կապահովի գործընթացի իրականացումը ԷՄԱ կանոններով սահմանված ժամկետներում,

11) Ընկերությունը 2026 թվականի հունիսի 2-ի №ԷՊ-02/06 գրությամբ կրկին հայտնել է, որ ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ քայլերը մատակարարման գործող պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասով և շարունակում է բանակցությունները և ևս մեկ անգամ հավելել, որ անկախ համաձայնագրերի ստորագրման փաստից, չի խոչընդոտի որևէ սպառողի մատակարարման պայմանագրի լուծման գործընթացին,

12) Ընկերությունը 2026 թվականի հունիսի 3-ի №ԷՊ-03/06, 2026 թվականի հունիսի 5-ի №ԷՊ-05/06 և 2026 թվականի հունիսի 12-ի №ԷՊ-12/06 գրություններով Հանձնաժողով է

ներկայացրել իր հաշվեկշռման պատասխանատվության խմբում ներառված սպառողներից ստացված երկկողմ հաստատված համաձայնագրերի հերթական պատճենները՝ թվով 13 հատ,

13) Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 8-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ ԷՄԱ կանոնների 37-րդ և 68-րդ կետերի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 8-ի №Մ/34.3-Մ2-23/3013-2026 գրությամբ: Նույն գրությամբ Ընկերությունը տեղեկացվել է նաև, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, նույն հոդվածին համապատասխան, անհրաժեշտ է գրությունն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ Ընկերության պարզաբանումը:

14) Վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2026 թվականի հունիսի 18-ի №ԷՊ-18/06 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել իր պարզաբանումները, մասնավորապես՝ հայտնելով, որ Հանձնաժողով է ներկայացրել սպառողների հետ կնքված մատակարարման պայմանագրերում փոփոխություն կատարելու մասին երկկողմ հաստատված լրացուցիչ համաձայնագրերի պատճենները, ինչպես նաև մատակարարման պայմանագրերում փոփոխություն կատարելու մասին բոլոր սպառողներին ծանուցման փաստը հաստատող գրությունները, կրկին նշելով, որ սպառողների նախաձեռնությամբ պայմանագրի լուծման ցանկության դեպքում ապահովել է սպառողի կողմից պահանջվող ժամկետում պայմանագրի լուծման գործընթացի իրականացումը: Ընկերությունը կրկին անդրադառնալով պետական գնումների մրցույթների միջոցով էլեկտրական էներգիայի ձեռք բերման համար մատակարարներին ներկայացվող պայմանագրերի ձևին՝ նշել է, որ դրանցում փոփոխություններ իրականացնել հնարավոր չէ,

15) ԷՄԱ Կանոնների 37-րդ կետի համաձայն՝ մատակարարն օրենքի, լիցենզիայի, ԷՄԱ կանոնների համաձայն՝

1) Մատակարարման պայմանագրի պահանջներին համապատասխան էլեկտրական էներգիա է մատակարարում սպառողին՝ չկարգավորվող գներով,

2) Սպառողին ներկայացնում է հաշվարկային փաստաթուղթ՝ մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի վերաբերյալ,

3) պետք է ունենա սպասարկման գրասենյակ, պաշտոնական կայք, որոնց միջոցով սպառողին տրամադրում է տեղեկություն և պարզաբանում՝

ա. Մատակարարման պայմանագրի կնքման ընթացակարգի և անհրաժեշտ փաստաթղթերի,

բ. մատակարարվող էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի, վճարման ժամկետների և դրանց խախտման հետևանքների,

գ. Սպառողների կողմից բողոքների և դիմումների ներկայացման և Մատակարարի կողմից դրանց պատասխանելու կարգի,

դ. իր կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված այլ հարցերի վերաբերյալ.

4) սպասարկման գրասենյակում և պաշտոնական կայքում ապահովվում է մատակարարման պայմանագրի օրինակելի ձևերի հասանելիությունը,

16) ԷՄԱ Կանոնների 68-րդ կետի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

2) Սպառողի նախաձեռնությամբ՝ լուծումից առնվազն 6 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով մատակարարին, իսկ մատակարարման խմբի մասնակից լինելու դեպքում՝ լուծումից առնվազն 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով մատակարարին և մատակարարման խմբի մյուս մասնակիցներին,

3) Մատակարարի նախաձեռնությամբ՝ մատակարարման պայմանագրով կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ այդ մասին առնվազն 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով սպառողին,

4) Բաշխողի հետ պայմանագրի լուծման դեպքում՝ պայմանագրի լուծման պահից, բացառությամբ մատակարարման խմբի մասնակից Ենթասպառողի, որի հետ պայմանագրի լուծման դեպքում մատակարարման պայմանագիրը լուծվում է միայն տվյալ ենթասպառողի մասով:

17) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը չի ապահովել իր հաշվեկշռման պատասխանատվության խմբում ներառված սպառողների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերում մատակարարի և

սպառողների նախաձեռնությամբ պայմանագրի լուծման՝ ԷՄԱ կանոններով նախատեսված ժամկետների սահմանման պահանջը, այն է՝ սպառողի նախաձեռնության դեպքում մատակարարման պայմանագրի լուծումից առնվազն 6 աշխատանքային օր առաջ մատակարարին տեղեկացնելու և մատակարարի նախաձեռնության դեպքում՝ մատակարարման պայմանագրով կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով այդ մասին սպառողին առնվազն 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնելու փոխարեն կնքված պայմանագրերում ամրագրվել է եռամսյա ժամկետ: Ընդ որում, թեև Ընկերությունն իր հերթական գրություններով Հանձնաժողով է ներկայացրել ԷՄԱ կանոններով սահմանված պահանջներին համապատասխան սպառողներին ներկայացված պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրերը և որոշ սպառողների կողմից հաստատված երկկողմ ստորագրված համաձայնագրերը, այնուամենայնիվ վերջինս չի ապահովել իր հաշվեկշռման պատասխանատվության խմբում ներառված բոլոր սպառողների հետ ԷՄԱ կանոններով սահմանված պահանջներին համապատասխան մատակարարման պայմանագրերի վերակնքման գործընթացը, ինչն ըստ էության իր գրություններով ընդունել է նաև Ընկերությունը: Ինչ վերաբերում է պետական գնումների ընթացակարգով կնքված մատակարարման պայմանագրերի առնչությամբ Ընկերության կողմից բարձրացված խնդրին, ապա վերջինս վերաբերելի չէ վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցին: Արդյունքում փաստվել է, որ Ընկերության կողմից խախտվել են ԷՄԱ կանոնների 37-րդ կետի 1-ին ենթակետով և 68-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջները,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԷՄԱ կանոնների 37-րդ կետի 1-ին ենթակետով և 68-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան

-- ---------- 2026թ.